

**Շիրակի մարզի Հ-21, /Հ-75/- Հոռոմ-Արթիկ -Ալագյազ հանրապետական
նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 4+000 հատվածի
հիմնանորագման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի
գնահատման ծառայություններ**

Ինժեներաերկրաբանական եզրակացություն

1. Հետազոտվող տեղամասը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի արևմտյան մասում, ընգրկելով Շիրակական և Գուսանագյուղ համայնքների տարածքները:

2. Տեղամասի ինժեներաերկրաբանական պայմանները պարզաբանելու նպատակով կատարվել են հետևյալ աշխատանքները՝

— Նախկինում տվյալ և հարակից տարածքներում տարբեր նախագծա-հետազոտական և գիտա-արտադրական կազմակերպությունների կողմից կատարված հետազոտությունների հաշվետու նյութերի հավաքում, վերլուծություն և ընդհանրացում:

— Հավաքած նյութերի կամերալ մշակում և սույն եզրակացության կազմում:

3. Շրջանն ունի բարեխառը տաք, չոր ամառներով և չափավոր ցուրտ ձմեռներով կլիմա:

Օդի տարեկան միջին ջերմաստիճանը $5,6^{\circ}\text{C}$

Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 34°C :

Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է -26°C :

Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 581 մմ:

Գերակշռում են 1.9 մ/վրկ արագության հյուսիս-արևելյան ուղղության քամիները, 25 տարվա ընթացքում մեկ անգամ հնարավոր են 25 մ/վրկ արագության (ուժգնության) քամիներ:

Չյան ծածկոցի հաստությունը հասնում է 61 սմ, ճնշումը՝ 25.2 կգու/մ²:

Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 142 սմ:

4. Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը տեղադրված է Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջերի ստորոտային մասում, էռոզիոնա-հողմնահարման լանջերից Շիրակի դաշտավայրին անցման գոտում: Մակերեսը հարթ է, ընդհանուր թեքությամբ դեպի արևմուտք:

Մակերեսի նիշերը տատանվում են 1455.0-1528.0 մետրի սահմաններում:

5. Տարածքի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է միջին Չորրորդական հասակի բազալտային անդազիտներով և տուֆերով որոնք ծածկված են Չորրորդական և ժամանակակից էլուվիալ, դելյուվիալ, լճային կավավազային խճա-խճավազային, և բեկորային գոյացումներով:

Ստորև տրվում է ուսումնասիրման գոտու նկարագրությունը և երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների արժեքները ըստ ֆոնդային տվյալների:

6. Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը տեղադրված են 2-10 մ և ավելի խորության վրա

7. Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական երևույթները և պրոցեսները՝ սողանք, կարստ, փլուզում և այլն, ուսումնասիրվող տարածքում բացակայում են: Սակայն հարկ է նշել, որ

վտանգավոր ֆիզիկաերկրաբանական պրոցեսներն ու երևույթները ներկայացված են ճահճացման պրոցեսներով, որոնք դրսևորվում են բեյեֆի տեղային իջվացքներում: Ճահճացման երևույթները դիտվում են ՊԿ 26+00 - ՊԿ 28+00 ավտոճանապարհի աջ եզրին:

8. Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 շրջանը և տեղամասը մտնում են I սեյսմիկ գոտում ($A_{max} = 0.3g$): Տեղամասի գրունտային պայմանների գործակիցը (K_0) ըստ թիվ 4 աղյուսակի կկազմի 1.0: Տեղամասի հաշվարկային սեյսմիկությունը սպասվող առավելագույն արագացման գործակցի (g) արտահայտմամբ կկազմի՝

$$A_{max} = 0.3g \times 1.0 = 0.3g$$

9. Միաժամանակ նշում ենք, որ սույն եզրակացությունը կազմվել է ֆոնդային և տարածքի տեղազննման նյութերի հիման վրա, ուստի փաստացի գոյություն ունեցող երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքի և սույն եզրակացության մեջ տրված նկարագրության միջև հնարավոր են որոշ անհամապատասխանություններ, որոնք կճշտվեն շինարարական խրամուղիները փորելուց հետո ինժեներ-երկրաբանի կողմից դրանց զննման ակտը կազմելու ժամանակ:

10. Նախատեսել՝

- հիմնանորոգվող տեղամասում ստորգետնյա ջրերի հորիզոնը ընկած է գործող ա/ճ-ի հողային պաստառից 1,0-2,7մ խորության վրա, ունեն ինֆիլտրացիոն բնույթ և ծագումնաբանորեն կապված են Ախուրյանի ջրամբարի ջրի մակարդակից:
- Իրականացնել ջրահերացման աշխատանքներ ՊԿ00+00 ÷ ՊԿ30+00 հատվածում, կամ իրականացնել բնահողի փոխարինում: Փոխարինմանը ենթակա են սև կավերը (շերտ-5), որոնք տեղ տեղ գտնվում են ջրհագեցած վիճակում: Որպես փոխարինման նյութ ընտրել խոշորա-բեկորային բնահող բազալտային կազմի, խճով և մանրախճով:

Գրականության ցանկ

1. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր ՀՀՇՆ 20.04-2020
2. Ավտոմոբիլային ճանապարհներ ՀՀՇՆ 32-01-2022
3. Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ 22-01-2024
4. Асланян А.Т. Региональная геология. "Айпетрат", Ереван, 1956.
5. Комплексная гидрогеологическая и инженерно-геологической съемка масштаб 1:50000 для мелиорации бассейна среднего и нижнего течения р.Ахурян. Ереван 1989г. Геологический фонд РА.
6. О результатах геоэкологических исследований и картографирования в масштабе 1:50 000, проведенных в Ахурянском, Спитакском и Ашотском районах Республики Армения в 1991-1995гг. Ереван 1995г. Геологический фонд РА.

Ինժեներ-երկրաբան՝

Դ.Առաքելյան

